**Հասցեատեր՝**
«Գանձասար ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝

**«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության**

**Կարգապահական և էթիկայի կոմիտեի**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18.09.2025թ.**

| | |
|---|---|
| Զեկուցող (անդամ) | Դավիթ Բակլաչյան |
| Անդամներ | Արփի Լազարյան |
| | Հենրիկ Խաչատրյան |
| | Նարեկ Ադամյան |
| | Նազելի Արսենյան |

---

| | |
|---|---|
| **Վարույթ՝** | 17A-006 |
| **Խախտում՝** | «Գանձասար-Երևան-09» թիմի ֆուտբոլիստ Հովհաննես Անտոնյանի (35626) կողմից հայհոյանք հնչեցնելը մրցակցի հասցեին (Հավելված 1 Զ, 17-րդ կետ) |
| **Առաջնություն՝** | ՀՀ ֆուտբոլի 2025-2026թթ. մինչև 17 տ. Պատանեկան առաջնություն |
| **Խաղ՝** | «Գանձասար-Երևան-09» - «ՈՒրարտու-10-1», 06.09.2025թ. |

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Գանձասար-Երևան-09» թիմի ֆուտբոլիստ Հովհաննես Անտոնյանին (35626) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 6-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Գանձասար ՖԱ» ՀԿ -ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

**ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստի նախագահող՝**

**Դավիթ Բակլաչյան**

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը

պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:

- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: